

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի Ներքին աուդիտի բաժնի կողմից 01.01.2014թ. դրությամբ կատարված աշխատանքների մասին

2013թ. տարեկան ծրագրի շրջանակներում ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի կողմից իրականացվել է 85 աուդիտ, որից մարզային ենթակայության կրթական 53 ՊՈԱԿ-ներում /ֆինանսական հաշվետվությունների, ֆինանսական բնույթի տեղեկություններում և հաշվապահական հաշվառման գրանցումներում արտահայտված տվյալների արժանահավատության գնահատում, ֆինանսական գործառնությունների առանձին տեսակների օրինականության ստուգում/, առողջապահական 31 ընկերություններում /«Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջների կատարման օրինականություն/ և ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմում /ֆինանսական կառավարմանը, ներքին հսկողությանը առնչվող գործառնություններ/:

Հրավիրվել է մարզպետարանի նորաստեղծ Ներքին աուդիտի կոմիտեի վեց նիստ, քննարկվել են աուդիտի հաշվետվությունները, որի արդյունքում կայացվել են համապատասխան որոշումներ, որոնց հիման վրա խախտում թույլ տրված մի շարք ՊՈԱԿ-ների տնօրեններ ենթարկվել են կարգապահական տույժերի՝ մասնավորապես 3 տնօրեններ ազատվել են աշխատանքից, 7-ը ստացել են «խիստ նկատողություն» և 6-ը՝ «նկատողություն»:

Աուդիտի ընթացքում արձանագրվել են հետևյալ խախտումները՝

1. Տնօրենների կողմից տրված հրամաններում բացակայում են իրավական հիմքերը կամ ՀՀ օրենքներին և ՀՀ կառավարության որոշումներին համապատասխան հոդվածներին հղումները:

2. Դպրոցի կառավարման խորհրդի ձևական գործունեությունը.

3. Դպրոցներում իրականացվող դասաժամերի ոչ պատշաճ ձևով հաշվառումները.

4. Աշխատողներին տարաբնույթ վճարումների կարգի և չափերի /կապված վարձատրության, արձակուրդի, ինչպես նաև տոնական և հիշատակի օրերի հաշվարկման հետ/ խախտումները.

5. Նախահաշիվների, ծախսային և հաշվապահական հաշիվների, դրամարկղային գործառնությունների վարման, եկամտահարկի, ժամանակավոր անաշխատունակության նպաստների հաշվարկման հետ կապված խախտումներ.

6. Գույքի դուրս գրման, տարբեր միջոցների անհարկի վատնման, շինարարական աշխատանքների ծախսային մասերում կատարված խախտումները.

Մի շարք դեպքերում գնումները կատարվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքին ոչ համապատասխան, իսկ առանձին դեպքերում խախտվել են նաև «Հաշվապահական հաշվառման մասին», «Շահութահարկի մասին», «Ավելացված արժեքի հարկի մասին» և այլ ՀՀ օրենքների ու ենթաօրենսդրական ակտերի պահանջները:

Մարզպետի կողմից գրություններ են հասցեագրվել աուդիտի ենթարկված կազմակերպությունների տնօրեններին: Մարզային ենթակայության կրթական հաստատությունների ղեկավարների և հաշվապահների մասնակցությամբ կատարված աուդիտի

հիմքով կազմակերպվել են խորհրդակցություններ, որոնց ընթացքում վեր են հանվել թերությունները, տրվել համապատասխան հանձնարարականներ և հսկողություն սահմանվել ՊՈԱԿ-ների կողմից ձեռնարկվող միջոցառումների նկատմամբ: Ներքին առողիտի բաժնի կողմից պարբերաբար ցուցաբերվել մեթոդական օգնություն, իսկ արձանագրված գումարային խախտումների վերականգնման նպատակով կազմվել են ժամանակացույցեր, ներկայացվել են փաստացի վերականգնված գումարները հիմնավորող փաստաթղթեր:

ՀՀ ԼՈՒՌԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՆԵՐՔԻՆ ԱՌԻԴԻՏԻ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝

Լ.ԲԵՐՈՅԱՆ